ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. հոկտեմբերի 2-ից 3-ը ՌԴ (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Հակոբ Վարդանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա

4. **Հրավիրող կողմը**

Այցը կայացել է ըստ ռուսաստանյան կողմի հետ պայմանավորվածության՝ հրատապությունից ելնելով:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

ՌԴ էներգետիկայի նախարարության հետ պայմանավորվածություն էր ձեռք բերվել ՌԴ - ից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող նավթամթերքների գծով 2023թ. ինդիկատիվ հաշվեկշիռներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
Այցի նպատակն էր փաստաթղթի բնօրինակի երկկողմ ստորագրումը, որպեսզի ՌԴ մաքսային մարմինները թույլ տան Հայաստան արտահանվող նավթամթերքի բացթողումը մաքսային սահմանից:

6. **Քննարկված թեմաները**

Քննարկվել են 2013թ. դեկտեմբերի 2-ին կնքված ՀՀ - ՌԴ կառավարությունների միջև Հայաստան բնական գազ, նավթամթերք ու չմշակված բնական ալմաստի մատակարարումների ոլորտում համագործակցության համաձայնագրի շրջանակներում բենզինի և դիզվառելիքի ինդիկատիվ բալանսների 2023թ. համար հաստատված փոփոխությունների հարցը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպել եմ ՌԴ էներգետիկայի նախարարի առաջին տեղակալ Պավել Սորոկինի հետ:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ստորագրվել է նոր ինդիկատիվ բալանս, որի արդյունքում ավելացվել են ՌԴ-ից ՀՀ-ին հատկացվող բենզինի և դիզվառելիքի քվոտաները՝ համապատասխանաբար 15.000 և 20.000 տոննայով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայաստանյան ներմուծողները հնարավորություն կունենան ներմուծել վերը նշված ապրանքների անհրաժեշտ քանակը՝ համաձայն ստորագրված փաստաթղթի:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

10.10.2023թ.